Այն ինչ, տարաբախտաբար, Կովկասեան մայրաքաղաքի և հայաշատ կենդրոններից ոչ հեռու տեղ գտնուած Ուտիացոց աշխարհի մէջ բըռնութեամբ կրօնափոխ եղած 77400 (եօթանասուն եօթ հազար և չորս հարիւր) Հայերի նիստ ու կացի, վարք ու բարքի, նրանց ընտանեկան սովորութիւնների և առանձնայատկութիւնների մասին, որքան ինձ յայտնի է, ոչ մի տող չէ եղել մեր Հայ պարբերական մամուլի էջերում։ Այս իսկ պատճառով, հոգով և անկեղծ սրտանց ես ցանկանում եմ, որ մեր ընթերցողները խորին ուշադրութեամբ կարդան սոյն տողերս։ Սիրում եմ յուսալ, որ գէթ այսուհետև մեր բանասէրներն ու հնագէտները կգնան Ուտիացոց աշխարհ, անձամբ կտեսնեն, կգնեն և մանրամասնաբար կըքննեն ամեն բան։ Ապա իրենց հետազօտութեան արդիւնքները հրապարակ հանելով, ապագայ Հայ պատմաբանի համար ընտիր և պատուական նիւթեր կմատակարարեն։ Նիւթեր, որոնք պիտի լրացնեն մեր պատմութեան թերի կողմերը և որոնք պիտի լուսաբանեն Հայ պատմութեան մութ կէտերը։ Ուտիացոց երկիրը իւր առատ և շահաւէտ պէսպէս բերքերով, իւր բազմարդիւն հողերով և գեղանկար տեսարաններով եղեմական կատարեալ մի դրախտ է։ Բայց ափսոս և հազար ափսոս, որ լուսաւորութեան և կրթութեան կողմից շատ ու շատ յետ է մնացել։ Ահագին Կով-

---

ցոյն Հռովմայ», Ս. Պետերբուրգ։